Ի՛

ԿՀԻՔ

ՅԻՍՈՒՍԻ ԲՐԻՍՏՈՍԻ Ծառայ Տէր Սիմէօն Կաթուղիկոս և ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց, Առաքելականի Եկեղեցւոյս Քրիստոսի, և Տիեզերականի մեծի Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի։ Ցորմէ սիրով և կարօտիւ և Քրիստոսականաւ Ողջունիւ ծանիր սիրելիդ իմ Ցարութիւն Աստուածաբան Վարդապետ։ Զի գիտես իսկ, և քանիցս գրեցաք ևս թէ՝ դրամից յոյժ պակասութիւն ունիմք վասն ներկայիս շինուածոցն ծախուց, և հասարակ պակասութեանցն Սրբոյ Աթոռոյս. և յուստեքէ զեկս ինչ ոչ ունիմք. առ այս ի Կարին մարդ յղեցաք, զի զքանի մի ուղտս գնիցեն վասն քարակրութեան և այլ ինչ պիտանաւորութեան. և զայլս ոմանս հարկաւոր պիտանիս գործածելիս առնիցեն. ընդ նմին և գրեցաք ևս անդ ոմանց բարեկամաց, զի եթէ կարելի իցէ՝ զգինս առնլեացն տայցեն, և զչափաւոր դրամս ևս մեզ տայցեն. և մեք փոլիցայիւ ի պոլիսդ տացուք իւրեանց։ Որ և՝ ահա ի յԱրապկերցի մուրտիկնց Մահտեսի Փիլիպոսի եղբայր Պարոն Առաքելէն առաք զչորս հազար ղուռչ դրամս նագտ ձեռամբ մեր Պարոն Մելքոնին, և մեր Տէր Պետրոսին, զորս հասուցին մեզ ձեռամբ մեր համթայ նուիրակ Ստեփաննոս վարդապետին, և փոլիցայի գիր տուաք որ ի Պոլիսդ դու սիրելիդ մեր ուստի և իցէ ի Գանձանակաց և ի նուիրական արդեանցն Սրբոյ Աթոռոյս, հասուսցես ի Վէզիրխան բնակեալ Ակնայ Կամրկապ գեղջէն մահտեսի Կարապետի որդի Խոճայ Յակոբին. յետ ԺԱ օր վատային, որպէս և Աբրահամ վարդապետ եղբօրն մերոյ ևս ծանուցաք։ Վասն որոյ՝ հարկադրութեամբ գրեմ սիրելւոյդ զի առանց պատճառի և թարց զանցաւորութեան յուստեքէ և իցէ հարկիւ հոգացեալ տայցես զայդ վերոգրեալ դրամդ, որ մեք աստ առաք. և զփոլիցայագիրսն առնուցուս ի նմանէ և ընդ քեզ պահեսցես հանդերձ առ քեզ գրեցեալ բարեագրոցն մերով։ Գիտեմ զի զխարեն Ֆէրմանացն և զգինս առնլեացն ի հոգալդ ոչ այնքան մնայ դրամ ի քեզ, սակայն ի Գանձանակաց և յայլ յուստեքէ և իցէ պարտիս հոգալ և տալ անպատճառ։ Գրեցաք ևս յառաջ քան զայս զորքանութիւնս խարեցելոց դրամիցդ քոց. զի այն ի քեզ իբր զավզ մնասցէ ի միամտութիւն քեզ։ Բազմիցս գրեցաք և կրկին ևս գրեմք զի զգիրդ և զորպիսութիւնդ ի մէնջ անպակաս արասցես, զի այն է բարին։ Իսկ և զմէնջ, կենցաղավարիմք Աստուծով կերպիւ իւիք՝ չունելով քան զկարն վիչտ, թէպէտ ունիմք զպակասութիւնս չատս՝ զորոց գրեալ եմ յառաջ։ Վասն այսորիկ գրեմ քեզ, զի մի գուցէ ի Վատայէն անդր անցուցանիցես, և կամ ցաւեցուսցես ի տալդ զդրամս զայս, զի գիտես որ մեծ ամօթ է մեզ և անուանաբեկումն՝ սառաքեն դոքա. Ժ.ին ԺԲ.ոցն առնուն յետոյ ի մէնջ որպէս և պայմանագրեցին ևս, հարկիւ սիրով և թարց գլխացաւութեան և յամեցուցման տայցես՝ և զգրեանսն առնուցուս ի ձեռացն։ Զայս գիր շուտափոյթ գրեցաք, վասն զի ի կարնոյ փայեկ էին յղեալ Վատայով. և մեք ևս յԵրևան էաք ի տես Խանին մերոյ, որովհետև ի հիւանդութենէ էր ելեալ։ Գրեցաք յառաջ թէ՝ որպէս պարտիս կենցաղավարել ընդ Պատրիարքին. և վասն մատանւոյն թէ առ մեզ դարձուցես. և վասն ԲՌ դուռչին թէ՝ Մօսէս Վարդապետն ոչ ետ մեզ. և խընդրեցաք զորպէս գնալն ձեր ընդ Գրիգոր Վարդապետին ի մասրաֆարարութիւնն ձեր, և զայլս այսպիսիս, զորոց զպատասխանիսն չուտով խնդրեմ. և լեր ողջ սիրելիդ իմ ի տէր։ Գրեցաւ ի ՌՄԺԳ [1764] թուին ի յունիսի ամսոյ ԺԵ.ումն, և ի Լուսանկար Աթոռս Սրբոյ Էջմիածնի։